Իմացեք Երկնային Հոր զավակների մասին, որոնք ապրում են ամբողջ աշխարհում:

Ողջույններ

ՊԱՊՈՒԱ ՆՈՐ ԳՎԻՆԵԱՅԻՑ

Պապուա Նոր Գվինեան երկիր կղզի է Խաղաղ օվկիանոսում: Այն ընդգրկում է Նոր Գվինեա կղզու կեսը: Այնտեղ բնակվում է ավելի քան 8 միլիոն մարդ:

ՀԱՎԱՔԱՏՆԵՐ

Պապուա Նոր Գվինեայում հաճախ են ջրհեղեղներ տեղի ունենում: Ուստի, եկեղեցու շենքերն այնտեղ կառուցված են ցցերի վրա: Երբ ջրհեղեղ է լինում, անդամները կարող են թիավարել իրենց նավակները մինչև դուռը:

ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆԵՐ

Պապուա Նոր Գվինեայի ցեղերը հավաքվում են երգելու, պարելու, ավանդույթներով կիսվելու և ընկերներ ձեռք բերելու համար: Ամեն տարի 100-ից ավելի ցեղեր հավաքվում են երգի փառատոնի շրջանակներում:

ՋՈՒՆԳԼԻՆԵՐԻ ԹՌՉՈՒՆՆԵՐ

Դրախտի թռչունները ջունգլիների ամաչկոտ թռչուններն են: Արուները շատ գեղեցիկ ու գունեղ թևեր ունեն: Երկրի դրոշի վրա դրախտի Ռագիանա թռչունն է:

ԼԵԶՈՒՆԵՐ

Պապուա Նոր Գվինեան ավելի շատ լեզուներ ունի, քան աշխարհի ցանկացած երկիր՝ մոտ 840 լեզու:

ՆԱՄՈՒԵՐԸ՝ ԺԵՆ.ԼՈՒՍԻ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հսկա թիթեռներ

Պապուա Նոր Գվինեայում հանդիպում են թիթեռների ամենաշատ տեսակները: Պատրաստեք ձեր թիթեռը: Հավաքեք փայտիկներ, տերևներ և ծաղիկներ՝ ուրվագիծը ստանալու համար: Օգտագործեք աջ կողմում գտնվող քանոնը և չափեք ձեր թիթեռի թևերի չափերը:

Ալեքսանդրա թագուհի թիթեռի թևերի բացվածքը. 28 սմ (11 դյույմ)

ԲԱՂԱԴՐԱՏՈՄՍ

Հավով ուտեստ

Սա Պապուա Նոր Գվինեայի ավանդական բաղադրատոմս է: Ահա մի բաղադրատոմս, որը կարող եք փորձել:

1. Կաթսայում դրեք **2 1/2 ֆունտ** (1 կգ) կտրտած հավ և ավելացրեք **1/2 ճաշի գդալ ձեթ**: Ավելացրեք **1 թեյի գդալ կարիի փոշի** և **1 թեյի գդալ աղ:**
2. Կտրտեք **1 քաղցր կարտոֆիլ** (կամ ցանկացած բանջարեղեն) և **1 կապ կանաչ սոխ**: Ավելացրեք կաթսայի մեջ՝ **1 բաժակ եգիպտացորենի հատիկների հետ**:
3. Բանջարեղենի և մսի վրա **1/2 բաժակ կոկոսի սերուցք** լցրեք: Ծածկեք կաթսան և բերեք ցածր եռման աստիճանի: Եփեք 30-40 րոպե:

Անպայման դիմեք մեծերի օգնությանը: